

ԱՅՈՒՒ  
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ  
ՄԻՐՈՅ ԶԱՎՈՂԱՐԵԱՆՑ  
ԵՐՈՒՍԱԳԼԵՄ

31 Յուլիս 1928

ARMENIAN PATRIARCHATE  
JERUSALEM

№ 672 / 29

Հոգեշնորհ  
Տ, Վահան Վարդապետ Գէորգեան  
Տեսուչ Հայոց Վանուց  
ԼԱՌՈՂԻԿԷ

Քէսապէն Արժ, Տ, Պետրոս քահանայ Բապունճեան, Յուլիս 2 թուակիր նամակաւ մը խնդրած է որ Մաղաքիա Բապունճեան եւ Մինաս Ղազէրեան անուն երկու պատանիներ ընդունուին Ժառանգաւորաց Վարժարանիս աշակերտաց շարքը: Ինչպէս յայտնի է Ձեր Սիրելութեան, ղպրոցական յառաջիկայ 1928-1929 տարեշրջանին աւթիւ ընդունուելիք սաներու կարգադրութիւնք վերջացած են արդէն: Յառաջիկային սակայն, եթէ նորեր ընդունելու պէտք տեսնուի, նկատողութեան կառնուի վերոյիշեալ երկու թեկնածուներուն համար եղած խնդրանքը: Հետեւաբար կը յանձնարարուի Ձեր Սիրելութեան, ըստ այսմ հարգել Արժ, Տ, Պետրոս քահանային:

Ողջունիւ Սիրոյ, Աղօթարար  
ՊԱՏՐԻԱՐԻԱԿԱՆ ՓՈՒՍԱՆՈՐԻ